# Նա քաջաբար արեց այն, ինչ ճիշտ է

**Ցուցումներ:** Այս առաջադրանքը կատարիր հանգիստ միջավայրում: Աստվածաշնչից համարներն ընթերցելիս պատկերացրու, որ դու ներկա ես նկարագրվող իրադարձությանը: Մտովի պատկերացրու տեսարանը: Լսիր մարդկանց ձայները: Փորձիր զգալ, թե գլխավոր կերպարներն ինչ են զգում:
**Գլխավոր կերպարները:** Բարուք, Երեմիա, Հուդայի իշխաններ
**Ներկայացված դրվագը:** Բարուքը գրի է առնում Երեմիայի խոսքերը և բարձրաձայն կարդում է Հուդայի իշխանների համար:

## 1 ՄՏԱԾԻՐ ԴՐՎԱԳԻ ՄԱՍԻՆ (ԿԱՐԴԱ ԵՐԵՄԻԱ 36:4–32):

Քո պատկերացմամբ նկարագիր «քարտուղարի ճաշասենյակը, ուր նստած էին բոլոր իշխանները»:

________________________________________

________________________________________

Քո կարծիքով՝ ի՞նչ էր զգում Բարուքը, երբ իշխանների համար բարձրաձայն կարդում էր Երեմիայի խոսքերը:

________________________________________

________________________________________

Ձայնի ի՞նչ տոնով իշխանները Բարուքին ասացին 16–19-րդ համարներում գրված խոսքերը:

________________________________________

________________________________________

## 2 ՓՆՏՐՏՈՒՔՆԵՐ ԱՐԱ:

Հե՞շտ էր Բարուքի համար երկրորդ անգամ «փաթույթի մեջ» գրի առնել Երեմիայի խոսքերը (հուշում. *նորից կարդա Երեմիա 36:4, 32*):

________________________________________

________________________________________

Ինչո՞ւ կարող էր Բարուքի համար դժվար լինել Երեմիայի մարգարեությունը գրելն ու մարդկանց համար բարձրաձայն կարդալը (կարդա՛ Երեմիա 26:8):

________________________________________

________________________________________

Ինչո՞ւ էր Երեմիան ուզում, որ Բարուքը ժողովրդի համար կարդա մարգարեությունը, եթե ինքը արդեն երկար տարիներ մարգարեանում էր նրանց համար (հուշում. *նորից կարդա Երեմիա 36:7*):

________________________________________

________________________________________



www.jw.org © 2013 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania

## 3 ԿԻՐԱՌԻՐ ՍՈՎՈՐԱԾԴ:

Գրի առ, թե ինչ սովորեցիր այն մասին, թե...

ինչու Աստծու ծառաները քաջության կարիք ունեն:

______________________________________________

______________________________________________

ինչպես է Եհովա Աստված վարձատրում նրանց, ովքեր քաջաբար անում են այն, ինչ ճիշտ է:

______________________________________________

______________________________________________

## 4 ՀԱՐՑՐՈՒ ԻՆՔԴ ՔԵԶ:

Ինչպիսի՞ իրավիճակներում եմ հատկապես քաջության կարիք զգում ճիշտն անելու համար:

______________________________________________

______________________________________________

Երբ ամաչում եմ, ի՞նչ կարող եմ անել, որ քաջությամբ լցվեմ (կարդա՛ Փիլիպպեցիներ 4:6, 7):

______________________________________________

______________________________________________

Այս պատմության ո՞ր դրվագն է ինձ համար ամենահետաքրքիրը և ինչո՞ւ:

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**Առաջարկություն:** Պատկերացրու՝ այս դրվագը պետք է հաղորդես լուրերով: Այն ներկայացնելիս ընդգրկիր հարցազրույցներ գլխավոր կերպարների և ականատեսների հետ:



JW.ORG

Բեռնիր և տպիր այս PDF ֆայլը www.jw.org կայքից



www.jw.org © 2013 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania